թեան հրովարտակաց Սէլիմայ և Սիւլէյմանայ, 'ի հիւսիսոյ Սիոնի՝ վանք Ս. Փրկչի, յարեւմտից կուսէ գերեզմանատունք Հայոց ։

Իսկ յորժամ Շէյխ Ահմէտ Տէճէնի Արքունի հրովարտակաւ թափեաց զագարակն իւր 'ի ձեռաց Լատինաց եւ վանեաց զնոսա անտի, յայնժամ Լատինք՝ որք կարի նուազ էին թուով՝ հրամանաւ ազգին Հայոց թաղէին զմեռեալս իւրեանց 'ի գերեզմանատունս նոցա ։ Ի հոլովիլ ամաց և 'ի նորոգել ժամանակաց՝ տենչանք բազմանալոյ հրապուրեաց զնոսա ընչիւք և հարստութեամբ վրդովել զմիտս հպատակ ժողովրդոց, և պէսպէս հնարիւք բաժանել և օտարացուցեալ զմի մասն ժողովրդոցն Հայոց, մուծին զնոսա 'ի կրօնս իւրեանց, (զայս բան ակնարկէ 'ի դէպս որ պատահեցաւ յաւուրս Յովակիմայ, զի ոմանք 'ի ժողովրդոցն Հայոց 'ի պատճառս չնչին իրաց գժտեալ ընդ միմեանս՝ թողին զհայրենի զեկեղեցին իւրեանց, և դիմեցին 'ի գիրկս Լատինաց որդւովք և ընտանեօք, և ընկալեալ զկրօնս նոցա մնացին անդ՝ որոց որդիք եւ թոռունք մինչեւ ցայսօր յիշատակին հայկական անուամբ հարց իւրեանց, և ինքեանք յայտնապէս վկայեն, թէ են յազգէ Հայոց), եւ այսպէս օր քան զօր զօրացեալ բազմացան 'ի քաղաքի աստ և զգեցան զզօրութիւն ։ Եւ բաց 'ի տեղւոջէն յայնմանէ, բռնաբարեն զայլ մի մասն գերեզմանատան, զոր Հայք կալուածական օրինօք սեփհականեալ են. սակայն չէ յայտ թէ յայնմ ժամանակի որպիսի եղանակաւ հանեալ են գիր Լատինք 'ի դատարանէ ։ Եւ զի զօրացուսցեն զմուրհակն եւ համարձակ հաստատեսցեն զիրաւունս իւրեանց, յարուցին վէճս յանիրաւի ընդ որդւոց Ահմէտ Տէճէնեայ ١١٧٨ ։ Եւ զկնի խռովութեանն այնորիկ տեղւոյն այնորիկ, որ առիթ եղեւ թշնամութեան, քարամբ և կրիւ սահմանս որոշեցին ։ Ջհանդուրժեալ Հայոց վնասակար և յանդուգն գործոյս, բողոք բարձին առ դատաւոր տարւոյն, և նորա արարեալ քննութիւն՝ զդէպս և զզրկանս Հայոց ճշդութեամբ գրեալ առաքեաց 'ի Դուռն, բայց 'ի ճանապարհի գիրն մատնեցաւ 'ի կորուստ ։ Իսկ 'ի սոյն ամի 'ի գալստեան կուսակալին Դամասկոսի, առեալ Լատինաց հրաման 'ի նմանէ որոշեցին զսահմանն զայն, տալով զմե-